մեանցը ասաց համառօտ և ազդու տուեն նախօսութիւն՝ իգական սեռի դաստիարակութիւնից յառաջացած մեծամեծ արդիւնքների մասին։ Կրօնական հանդիսից յետոյ սկսուեցաւ վիճակախաղութիւնը և ներկայ գտանուող հանդիսականների մէջ նշմարվումէր համակրութիւն։

Պէտք է վկայել՝ որ ամբողջ հանդէսը քաղցը և սրտաշարժ տպաւորութիւն գործեց ժողովրդի վերայ։ Հետևեալ օրը կատարուեցաւ նոյն դպրոցում օրիորդաց տարեկան հարցաքննութիւնը, և աշակերտուհիները ցցուցին առհասարակ զոհացուցիչ յառաջադիմութիւն։ Վաղարշապատու օրիորդաց դպրոցում ուսուցանելի առարկաները են — կրօնագիտութիւն, Հայոց լեզու և վայելչագրութիւն, Ռուսաց լեզու և վայելչագրութիւն, թուաբանութիւն, ասղնագործութիւն և երգեցողութիւն եկեղեցական և աշխարհական։

Հետևեալ Յայտարարութիւնը մեր ընթերցողաց խորին և համակիր ուշադրութեան կ՚յանձնեմք։

ԸՆ ՊԱՏՈՒԵԼԻ ՀԱՑՐԵՆԱԿԻՑ

Ի ՄԱՍԻՆ

ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԻ ԳԱՍՊԱՐԵԱՆ ԱՂՔԱՏԱՆՈՅԻ

Ի ՄՈՍԿՈՒԱ

ՊԱՏՈՒԵԼԻ ՀԱՑՐԵՆԱԿԻՑԸ.

Գասպարեան Աղքատանոցն տնանկ Հայերի համար ի Մոսկուա՝ հիմնուած է ի Պատուաւոր Քաղաքացւոյ Յիսահակայ Մովսիսեան Գասպարեանց, և սկսած է իւր գոյութիւնը Փետրուարի 23ին 1841 թուականի։ Գտանուում է նա այն տան մէջ՝ որ կառուցուած է նոյն ինքն հիմնադիր Գասպարեանէ, նորա սեպհական արդեամբքն, և այն հողի վերայ՝ զոր ընծայեցին հուշակաւոր բարերարքն՝ Տեարք (՝) Յովհաննէս և Խաչատուր Յովակիմեան Լազարեանք, և որ գտանուում է Մոսկուայի՝ յանուն Վերացման Կենսատու Սրբոյ Խաչի՝ Հայոց եկեղեցւոյ մօտին։

Աղքատանոցիս տեսչութիւնն յանձնուում է Խորհրդարանին, որ բաղկանում է ի Նախագահ Անդամէ, յերկու Կրտսեր Անդամոց, ի մի Անիտիոխ Անդամէ, և ի Հոգևորական անձնէ միոյ՝ որը ընտրուում են Մոսկուայի Հայ հասարակութենէն 2 կամ 3 տարի ժամանակով։ Խորհրդարանն կառավարուում է իւր գործոց մէջ՝ ԲԱՐՔ-ՐԱԳՈՑՆ հաստատուած Նոյեմբերի 27ին 1845 թուականի կանոնադրութեամբք։

Այս Աղքատանոցս ի սկզբան իւրում՝ ապահովուեցաւ 16·000 ռուբլի դրամագլխով, զոր ընծայեցին՝ նորա հիմնադիրն և Մոսկուայաբնակ Հայերն։

Զկնի մահուան բարերար Գասպարեանի, նորա կտակակատարաց ջանիւք՝ ժողովուեցաւ նորա պղևայլ պարտատէրներից՝ գումար մի իբրև 23·000 ռուբլի, որ՝ Գասպարեանի մահուանէն յետոյ մնացած միւս գումարների հետ միաւորուելով՝ աճեցաւ մինչև 33·600 ռուբլի, և որ գտանուում էր կտակակատարաց լիակատար տնօրէնութեան ներքոյ։ բայց յետոյ՝ կտակակատարքն՝ Պ. Բաղդասեանց և Յովնանեանց՝ կամելով այս օգտակար և բարեգործ հիմնարկութեան հաստատ գոյութիւնը ապահովացուցանել՝ որպէս ապաստարանի զառամեալ աղքատաց և հաշմանդամաց, բոլոր այդ գումարդ միաւորեցին Աղքատանոցիս մայր գումարի հետ, թողնելով իւրեանց տնօրէնութեան ներքոյ միայն այս դրամագլխի տոկոսիքը, որք համարեա թէ ամենն ի գործ են դրուում Աղքատանոցիս ծախքերը լրացնելոյ համար։

Ցընթացս ժամանակի՝ Մոսկուայաբնակ Հայերի նուիրաբերութեանց օգնականութեամբ՝ Աղքատանոցիս մայր գումարն առաւել ևս աճեցաւ և Նորա Խորհրդարանն ունի այժմ իւր տնօրէ-

նութեան ներքոյ մինչև 55,700 ռուբլի։ Եւ որովհետև այդ գումարդ ամփոփուած է երկու Թագաւորական անընդհատ արդիւնք բերող տոմսակների մէջ՝ 49,600 ռուբլի արժողութեամբ, որք տալիս են ի տարին արդիւնք 4 տոկոսիք, և միայն գումարիս մնացեալ մասնի համար ստացուում է 5 և 6 տոկոսիք, ուստի և Աղքատանոցն ունի նորանից տարեկան արդիւնք իբրև 2,300 ռուբլի, որպիսի գումարդ յոյժ սակաւ է՝ եթէ ի միտ առնուի՝ 1) թէ՝ խնամարկուողաց և նոցա ծառաների պահպանութիւնն, որպէս և Աղքատանոցիս ջեռուցման և լուսաւորութեան, ևս և նորա շինուածոյն նորոգութեան ծախքն՝ նստում են համարեա թէ 1,975 ռուբլի, 2) թէ՝ Աղքատանոցիս Խորհրդարանն տալիս է ծերացեալ աղքատ ազգակցաց, Աղքատանոցէն դուրս բնակողաց, ամսական և ժամանակաւոր օգնութիւն, և ըստ կարողութեանն՝ վճարում է աղքատ ծընողաց զաւակների կրթութեան համար, որոյ վասն ի գործ է դրուում մինչև 900 ռուբլի. իսկ տարեկան ծախքն ընդամենն հասանում է 2,875 ռուբլի, այնէ՝ 586 ռուբլի աւելի քան զմուտքն։ Աւելորդ ծախս եղած գումարն լցուցուում է՝ նոյնպէս և յայլ համազգիներից, որք գտանուում են Մոսկուայում։

Բայց, Աղքատանոցիս Խորհրդարանն՝ չնայելով իւր բոլոր աշխատանացն՝ իւր արդեանց սակաւութեան պատճառաւ՝ չէ կարողանում ըստ արժանւոյն շատացուցանել բարեգործութեան բոլոր պահանջմունքն. Մոսկուայում՝ կան շատ աղքատ անձինք ի Հայոց, որք կարօտ են օգնութեան. նմանապէս կան և զաւակք աղքատ ազգակից ծնողաց՝ որք փափաքում են զիտութեան, և որոց կարելի է բանալ ճանապարհ, տեղաւորելով զնոսա ուսումնարանի մէջ։

Այս դիտաւորութեամբ Գասպարեան Աղքատանոցի Խորհրդարանն՝ աւելորդ չէ համարում ծանօթացնել զիւր հայրենակիցքը սոյն այս բարեգործ հիմնարկութեան, նորա միջոցների և կարեաց հետ, և յոյս ունի՝ որ պատուելի ազգակիցքն համակրութիւն ցոյց տան այս բարի գործոյ, և չհրաժարուին ձեռնտու լինել նմա՝ ըստ չափու կարողութեան իւրեանց՝ օգնականութեան այսպիսի բարի և կարևոր գործում՝ բազում՝ որք և չքաւոր մեր եղբարք։ Իսկ իւրաքանչիւր նուիրաբերութիւն կընդունուի մեծաւ շնորհակալութեամբ, և նուիրատուաց անուններն՝ կգրաշմուին նուիրատուութեանց մատեանին մէջ։

Նախագահ Անդամ Յովհաննէս Յովհաննեանց.

Անդամք { Միքայէլ Ստեփանեանց
Միքէլ Փանեանց.

Անփոփող Անդամք Գէորգ Լիսանոզեան
Հոգեւորական անձն, Յարութիւն Աւագ Քանանց
Կէոքչէեանց։

ՀԱՅԻ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԱՑ Զ. Ի. ԵՐԿԱՅՆԱՐԱՁՈՒԿ ԱՐՔՈՒԹԵԱՆՑ ՀՈԳԵՒՈՐ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ ՀԱՅՈՑ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՕԼՈՅ.

Խմբագրոյ-Ընդ Աջոյ ամսագրոյ.

Հոգաբարձութիւնս Օրիորդական Հոգևոր դպրոցի յաւերժայիշատակ Ղահրաման Իշխանի Երկայնաբազուկ-Արդութեանց մուտ գործելով պաշտօնավարութեան համաձայն հաստատութեան Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց Տեառն և Տեառն Գէորգայ Զ-որդոյ Հայրապետական Կոնդակաւ ի 18ն Մարտի տարւոյս համարաւ 94 ստացաւ ի նախկին հոգաբարձուաց զամենայն ի ձեռս նոցա գտանեցեալ զդրամական հաշիւս և զայլ պատկանաւորութիւնս վերաբերեալս այդմիկ պաշտաման, նոյնպէս և զերկուս համառօտ հաշուեցուցակս մտից և ծախսուց դպրոցին յօրէ բացման մինչ ցսկիզբն ներկայ տարւոյս, պարտաւորութիւն համարէ ինքեան զվաւերական պատճէնս երկուց ցուցակացն ևս առաքել ի Խմբագրութիւնդ Արարատայ և խնդրել հրատարակել յէջս պատուական ամսագրոյդ ի լուր ազգայնոց, որպէս զի այդ պարտիք հոգաբարձութեանս յետաձգեալն ցարդ ըստ ինչ ինչ յարգելի պատճառաց կատարեսցի ի կողմանէ հոգաբարձութեանս